

ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հրանուշ Զաքյանի

«Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները հայերենում»

դոկտորական ատենախոսության վերաբերյալ

Հայ լեզվաբանական հարցերի գիտական ուսումնասիրությունը վերջին տարիներին անցել է հետազոտական խնդիրների ու նպատակադրումների աստիճանական ընդլայնման, փաստական նյութի հարստացման ու ճշգրտման, նկարագրության ու վերլուծության մեթոդների արդիականացման հետաքրքրական ու արդյունավետ ուղի: Ժամանակակից փուլում հասունացել են լեզվաբանական խնդիրների համակարգված քննության, տիպաբանական-զուգահեռական հետազոտությունների, տեսական նոր ընդհանրացումների ու ընդհանրացնող եզրակացությունների, ինչպես նաև զարգացման հետագա ուղիների նախանշման խնդիրները: Բարձրագույն տեխնոլոգիաների մեր դարաշրջանում, երբ համաշխարհային լեզվաբանությունը սրընթաց զարգացում է ապրում, լեզվական ցանկացած թեմայով ուսումնասիրություն չի կարող ժամանակավրեպ լինել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն ուսումնասիրվում է տվյալ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան և անպայման ծառայում է առաջադիր արդիական որևէ նպատակի:

Այս տեսակետից Հ. Զաքյանի՝ այսօր պաշտպանության ներկայացված աշխատանքը արժագանքում է հայ լեզվաբանության առջև արդի փուլում ծառացած խնդիրներին և իր տեսական հարցադրումների ու լուծումների առումով արդիական է:

Կառուցված լինելով մինչև օրս հայ լեզվաբանների մի քանի սերունդների երկարամյա աշխատանքի շնորհիվ հավաքված փաստական նյութի, տվյալների ընդհանրացման ու համակարգման հիմքի վրա՝ ատենախոսությունը նման աշխատանքների նախօրինակն ու շարունակությունն է:

Ատենախոսությունը նվիրված է շարահյուսության արդիական հարցերից մեկի՝ կրկնասեռ բայերի իմաստային-գործառական դրսևորումների ուսումնասիրությանը, որի համար լեզվական նյութ են ընտրվել հայերենի կրկնասեռ բայերը: Քննությունը կատարվել է ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա հայեցակետերով, որը ենթադրում է ոչ միայն հայերենի այս կամ այն շրջանի կրկնասեռ բայերի առանձնացում, այլև կրկնասեռության առաջացման և ձևավորման պատճառակցական հիմքերի բացահայտում, կրկնասեռության ձևավորմանը և չեզոքացմանը նպաստող գործոնների, կրկնասեռության ձևաիմաստային առանձնահատկությունների, ոճական, իմաստային-գործառական դրսևորումների և հայերենի զարգացման ընթացքում վերջիններիս կրած փոփոխությունների մեկնաբանություն:

Թեև հայ լեզվաբանության մեջ անդրադարձել են կրկնասեռ բայերին, սակայն, ըստ ատենախոսի, ամբողջական և համակարգված քննություն չի կատարվել: Հ. Զաքյանը փորձել է հիշյալ բայերի կապակցական հնարավորությունների ամբողջական ուսումնասիրություն կատարել, որով էլ պայմանավորված է սույն ատենախոսության արդիականությունը և նորույթը:

Քննության նպատակն է՝ հայերենի պատմական զարգացման երեք շրջանների՝ գրաբարի, միջին հայերենի և արդի հայերենի լեզվական փաստերի նորովի ուսումնասիրության հիման վրա տալ հայերենի բայական համակարգում կրկնասեռության իրողության առաջացման, պատմական զարգացման, իմաստային-գործառական դրսևորումների հնարավորինս ամբողջական նկարագրությունը ինչպես համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերով, այնպես էլ ցեղակից լեզուների համեմատությամբ: Աշխատության կառուցվածքը, նրա 3 գլուխների ու ենթագլուխների վերնագրերն ու բովանդակությունը վկայում են, որ կատարվել է կրկնասեռ բայերի բազմակողմանի քննություն:

Աշխատության 1-ին արժանիքը համարում ենք հայ լեզվաբանության ավանդների պահպանումն ու շարունակությունը, ինչպես նաև այս պահին առկա լեզվաբանական տվյալների քննությունը:

Մյուս կարևոր արժանիքը աշխատության բերած գիտական նորույթն է: Հեղինակը փորձել է կրկնասեռ բայերը քննել համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերի զուգորդությամբ: Համաժամանակյա կտրվածքում կրկնասեռությունը բնորոշվել է տվյալ լեզվափուլին հատուկ բնութագրական գծերով, իսկ տարժամանակյա կտրվածքում այն մեկնաբանվել է պատմական փոփոխությունների համատեքստում:

Կուզենայինք շեշտել ներկայացված աշխատության ևս մի կարևոր առանձնահատկություն: Գրաբարի, միջին հայերենի, արդի հայերենի կրկնասեռ բայերի զուգադրական քննությունը ներկայացվում է համապատասխան վիճակագրությամբ, որը հնարավորություն է տալիս տեսնելու կրկնասեռության ձևաիմաստային և ճական-գործառական դրսևորումների պատմական զարգացումը և կրած տարժամանակյա փոփոխությունները:

Եվ վերջապես չենք կարող առանձնահատուկ կերպով չարժևորել աշխատության հավելվածը, որն ի դեպ իր ծավալով մասամբ է զիջում բուն հետազոտությանը և պարունակում է ընդգրկուն աղյուսակներ, գծապատկերներ:

Ատենախոսությունը ավարտվում է հետազոտությունից բխող եզրակացություններով, որոնցում ամփոփվում են հեղինակի կատարած աշխատանքի արդյունքները և ամփոփ կերպով վեր են հանվում կրկնասեռ բայերի իմաստագործառական առանձնահատկությունները զուգադրական ներկայացմամբ:

Սակայն այս ամենով հանդերձ՝ աշխատանքում տեղ են գտել թերացումներ ու բացթողումներ, և ընդդիմախոսի պարտականությունն է նշել դրանք: Ատենախոսություն վերաբերյալ ունենք հետևյալ նկատառումները:

1. Սովորաբար ընդդիմախոսները իրենց կարծիքի վերջում արտահայտում են նմանատիպ մտքեր՝ *աշխատանքը ընդհանուր առմամբ գրված է գիտական պատշաճ մակարդակով, ձևավորված է խնամքով* և այլն: Այս աշխատանքի դեպքում նման բան դժվարանում ենք ասել, որովհետև թեև ատենախոսությունը գիտական ոճի աշխատանքների թվին է պատկանում, սակայն, ցավոք, նրանում գիտական ոճի որոշ պահանջներ պահպանված չեն:

Վաղուց արդեն ընդունված է ենթագլուխների կամ այլ հատվածների ստորակարգության համար գիտական տեքստերում օգտագործել առանձնացվող հատվածների 1-ին պարբերությունների սկզբում իրար հաջորդող թվեր՝ միջակետերով առանձնացվող, որոնցից առաջինները նշում են համեմատաբար մեծ հատվածների կարգը, երկրորդները՝ սրանց մեջ մտնողներինը, երրորդները՝ երկրորդ կարգի հատվածների մեջ մտնողներինը և այլն: Ըստ դրա՝ լինում են՝

երկաստիճան՝ 1.1., 1.2., 1.3. ..., 2.1., 2.2., 2.3., 3.1, 3.2. և այլն.

եռաստիճան՝ 1.1.1., 1.1.2., 1.1.3. ..., 1.2.1., 1.2.2., 1.2.3., 2.1.1., 2.1.2. և այլն.

քառաստիճան՝ 1.1.1.1., 1.1.1.2., 1.1.1.3. ..., 1.1.2.1., 1.1.2.2., 1.1.2.3. և այլն:

Սակայն ատենախոսը այս ստորակարգությունը մասամբ է պահպանում (տե՛ս ատենախոսություն, էջեր 2-5)՝ միայն երկաստիճան ստորակարգության դեպքում, որից հետո անցնում է տառային նշանակումների, օրինակ՝ 1.2. ա/, 1.2. բ/ և այլն, ավելին՝ սրանց ներսում էլ կատարում է 1, 2, 3 և նմանատիպ բաժանումներ:

Գիտական ոճի աշխատանքին անհարիր է նաև այն նշանի օգտագործումը, որոնք որպես չափերտներ առկա են աշխատանքում: Հայերենում ընդունված է գործածել կլոր անկյունով չափերտները՝ «»։ Այս մասին Լեզվի կոմիտեն իր հորդորակներից մեկում նշում է և առաջարկում տեխնիկական օգնություն՝ ինչպես ստանալ այդ չափերտները. հայերեն բացվող ու փակվող չափերտներ դնելու համար պետք է մուտքագրել համապատասխանաբար Alt+0171 և Alt+0187(Հորդորակ չափերտների գործածության մասին):

2. Հայ լեզվաբանության մեջ, ըստ հեղինակի ներկայացրած նյութի, կան բազմաթիվ ուսումնասիրություններ քննվող հարցի վերաբերյալ: Թեև ատենախոսության հեղինակը մանրազնին ուսումնասիրել է՝ փորձելով գնահատել իր քննության առարկայի վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ արտահայտված կարծիքներն ու վարկածները՝ որդեգրելով ու զարգացնելով իր համար նախընտրելի ու համոզիչ տեսակետները ու նաև տալով այս կամ այն հարցի մասին իր ուրույն մեկնաբանությունները, սակայն հարկ է նշել, որ ատենախոսության այդ հատվածը (Հարցի պատմությունից) բավականին ընդարձակ է՝ մոտավորապես 60 էջ (էջ 14-70): Ավելին, ներածության մեջ մանրամասնորեն հարցի պատմությունը ներկայացնելուց հետո հեղինակը նաև 2-րդ գլխում (**Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները միջին հայերենում**) ունի «Հարցի պատմությունից» ենթավերնագիր (էջ 142-146):

Հարցի պատմության այսպիսի ընդարձակ քննության դեպքում, սակայն,

ատենախոսի ուշադրությունից վրիպել են ուսումնասիրվող հարցին առնչվող որոշ կարևորագույն աշխատանքներ, ինչպիսիք են Գ. Խաչատրյանի «Գրաբարի կրկնասեռ բայերը» (Լեզու և լեզվաբանություն, 1-2, 2004, 34-44), «Գրաբարի կրավորական սեռի հարադրավոր բայերը և դրանց արժույթը» (Պատմաբանասիրական հանդես, հ. 1, 2000, 159-166) հոդվածները, «Գրաբարի վերլուծական բայերի արժույթը» մենագրությունը (2000, 308 էջ) ևն: Սրանց փոխարեն նշված է նույն հեղինակի Գրաբարի ձեռնարկը: Կարծում ենք՝ ատենախոսության մեջ ձեռնարկների փոխարեն հարկ է նախապատվությունը տալ գիտական աշխատանքների:

3. Ատենախոսը, անդրադառնալով հարցի քննությամբ զբաղվող հեղինակների կարծիքներին, նշում է դրանց և՛ ընդհանրությունները, և՛ տարբերումները: Վերջիններիս վերաբերյալ բացատրություններում փորձում է ներկայացնել նաև իր մոտեցումը, որոնք, սակայն, երբեմն վիճարկելի են: Հարցի պատմությունը քննելիս հեղինակը որոշ դեպքերում թերագնահատում է նախորդների կատարած աշխատանքը: Այսպես՝ ավարտելով հարցի պատմությունը՝ նա տողատակում եզրակացնում է. «Միջին հայերենի ուսումնասիրությամբ զբաղվող լեզվաբաններից ոչ մեկը չի կարծել, որ միջին հայերենը սկսվում է կիլիկյան հայերենով» (էջ 146)՝ չբերելով որևէ հիմնավորում: **Կամ՝** Տ. Սաֆարյանի «Հայերենի կրկնասեռ բայերը» մենագրությունը համարում է կրկնասեռության տարժամանակյա քննության փորձ (ատեն., էջ 67), իսկ տարբեր լեզվաբանների՝ բայասեռի (վերջին շրջանում՝ նաև կրկնասեռության) քննությանը նվիրված բազմաթիվ հոդվածները, քերականական բնույթի աշխատությունները և մենագրական ուսումնասիրությունները՝ նկարագրական բնույթի (ատեն., էջ 68): Սրան հակառակ՝ ատենախոսը գնահատում է իր աշխատանքը. «Հայերենի կրկնասեռ բայերը առաջին անգամ են ենթարկվում համակողմանի և ամբողջական քննության» (ատեն, էջ 11), մի գնահատական, որը հավանաբար պիտի տրվեր ընդդիմախոսների կողմից:

4. Ատենախոսը նշում է, որ հին հայերենում հասարակ սեռի բայերը ունեին ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական սեռի նշանակություններ (հետայսու՝ նբ//կբ) /ատեն., էջ 71/: Կարծում ենք՝ հեղինակը այս դեպքում շփոթել է *հասարակ բայ* և *հասարակ սեռ* տերմինային արտահայտությունները: Գրաբարում, ըստ Ա. Աբրահամյանի, եղել են ընդամենը հասարակ բայեր՝ սեռով պայմանավորված, բայց ոչ թե հասարակ սեռ: Այսպես՝ Ա. Աբրահամյանը, քննելով գրաբարյան բայասեռը, գրում է. «Գրաբարում կան մի շարք բայեր, որոնք ընդհանուր ձևով արտահայտում են և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ: Դրանք կոչվում են հասարակ (ընդհանուր) բայեր: Այդպիսի բայերը կարող են դրսևորել մի դեպքում ներգործական, մի այլ դեպքում կրավորական սեռի իմաստ՝ առանց ձևային փոփոխության, օրինակ՝ Մայր ծնաւ զորդի-«մայրը ծնեց որդուն», Որդի ծնաւ ի մորէ-«որդին ծնվեց մորից» (տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 96):

Եթե անգամ կան լեզվաբաններ, որոնք այլ կերպ են ներկայացնում, կարծում ենք, անհրաժեշտ էր հղում տալ

5. Ատենախոսը առանձնացնում է բայեր, որոնք հենց սկզբից էլ, ըստ իր կարծիքի, դրսևորել են կրկնասեռություն, քանի որ նախորդ շրջաններում չեն հանդիպում. «Լեզվի զարգացման այս կամ այն շրջանին բնորոշ նորակազմ կրկնասեռ բայերը, ինչպես, օրինակ՝ միջինհայերենյան *արևել, աշել*, արդիհայերենյան *զիզզազել, ամբարտակել, արեզակել*, ինչպես գիտենք, նախորդ շրջան(ներ)ում չեն հանդիպում», որից եզրակացնում է, որ «Դրանք մուտք են գործում բառապաշար հենց որպես կրկնասեռ բայեր: Այս դեպքում չկա իմաստային զարգացման պատմականություն, ուստի չկա կրկնասեռություն ձևավորող որևէ հիմունք: Այս բայերը ի սկզբանե կրկնասեռ են կամ ունեն սկզբնաձևային կրկնասեռություն» (էջ 72): Անհասկանալի է, թե ինչ աղբյուրների վրա հիմնվելով է ատենախոսը ենթադրում, որ դրանք նախորդ շրջաններում չեն հանդիպում: Այդ մասին որևէ խոսք չկա: Եթե ատենախոսը միայն բառարանների տվյալների վրա է հենվում, ապա հայտնի է, որ բառարաններում բոլոր բառերը չեն, որ տեղ են գտնում: Բացի այդ, այդ բայերի թվում նշված է նաև **ամբարտակել** բայը, որը Մալխասյանի բացատրական բառարանում տրված է որպես միայն ներգործական սեռի բայ (տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, 1944, էջ 57):

Էջ 74-ում ատենախոսը կարծես հերքում է իր վերոբերյալ միտքը՝ տողատակում կրկնասեռությունը կորցրած բայերի մասին անելով այսպիսի ենթադրություն. «Հնարավոր է՝ խնդրո առարկա կրկնասեռ բայերից շատերը քերականական այդ հատկանիշը կորցրել են հենց գրաբարի կամ միջին հայերենի մակարդակում, սակայն այդ շարժը մեռած գոյավիճակներում տեսնելը չափազանց դժվար է, քանի որ ցանկացած դիտարկում այս առումով կունենա իր հակափաստարկը՝ ի դեմս համապատասխան փաստերի բացակայության»: Նույն ենթադրությունը կարելի էր անել նաև այն բայերի վերաբերյալ, որոնք, ըստ հեղինակի, ի սկզբանե, կրկնասեռ են, մանավանդ էջ 76-ում կրկնասեռության ճանաչման համար առաջնային է համարում ոչ թե բառարանային նշումը, այլ կոնկրետ գործածությունը:

6. Շարադրանքի որոշ հատվածներում առկա են ոչ հստակ և անճիշտ ձևակերպումներ: Օրինակ՝ «**9. Զահուկյանը** «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատության մեջ մեր լեզվի միջին շրջանի համար տարբերում է *միջին հայերեն, կիլիկյան հայերեն, կիլիկյան գրական հայերեն* տերմինները» նախադասության մեջ (էջ 143) ատենախոսը «մեր լեզվի միջին շրջան» արտահայտության փոխարեն, հասկանալի պատճառով, պետք է գործածեր «գրական հայերենի միջին շրջան» արտահայտությունը:

Էջ 156-ում գրաբարի **արծակել** բայի մասին խոսելիս ատենախոսը նշում է, որ այն միջին հայերենում «... ունի ներգործական սեռի *թողնել, թույլ տալ* և չեզոք սեռի *տարածվել* նշանակությունները, որոնք արտահայտվում են հնչյունական տարբերություններ ունեցող **արծկել** , **արծկնալ** , **արծկենալ** ,

արծակնալ, **արծականալ** բառային տարբերակներով»: Սակայն իրականում դրանցից միայն առաջինն է (**արծկել**) գրաբարի **արծակել** բայի բառային տարբերակը, մինչդեռ մյուսները (**արծկնալ**, **արծկենալ**, **արծակնալ**) ոչ թե գրաբարի **արծկել**, այլ արդեն միջին հայերենի **արծականալ** բայի բառային տարբերակներն են, որը չեզոք սեռի բայ էր, և թեև նշվել է ՆՀԲ-ում, սակայն հիմնավորվել է Մխիթար Հերացուց վկայված բնագրային մեկ օրինակով (ՆՀԲ, Ա, 365):

Էջ 15-ում **թքանել** բայի մասին խոսելիս անհրաժեշտ էր անդրադառնալ միջինհայերենյան ոչ միայն **թքնել**, այլև վերջինիս՝ բնագրերում հանդիպող **թքնուլ** բառային տարբերակին: Հմմտ.

Նայ զայն մասխարա դնէ, Ու **թքնէ** զերդ զխմածիք – Ա. Մնացականյան, Հայրեններ, 503 և Նայ զայն մասխարայ դնէ, Ու **թքնու** զինչ ի խմածիկք – Ա. Մնացականյան, Հայրեններ, 398: Նայ զայն մասխարայ այնէ, Ու **թքնու** զինչ ի խմածիք – Ա. Մնացականյան, Հայրեններ, 488

Էջ 85-ում «**Լքան** յուրախութենէ սիրտք մեր» (Ողբ, Ե, 15) նախադասությունը ոչ թե կրավորական կառույց է, ինչպես սխալմամբ գտնում է ատենախոսը, այլ չեզոք, քանի որ **լքան** նշանակում է «զրկվել/դադարել» և ոչ թե «լքվել», իսկ **յուրախութենէ** ոչ թե ներգործող խնդիր է, այլ անջատման խնդիր:

Էջ 86-ում՝ Եթե բայը նբ//չբ է և ունի նաև *ի* լծորդով տարբերակ, ապա չեզոք սեռի նշանակությամբ գործածվելիս կարող է խոնարհվել թե՛ ներգործածն, թե՛ կրավորածն. սա ևս վերը նշված **խմորումների** հետևանք է: Լեզվում մի՞թե խմորումներ են տեղի ունենում:

7. Անհարթ շարադասության օրինակ է «Բաղադրական քերականական ածանցը կորցրել է գրաբարում կրկնասեռ **երկիրպագանել** բայը» (Էջ 154) փխ.՝ Գրաբարում կրկնասեռ **երկիրպագանել** բայը կորցրել է բաղադրական քերականական ածանցը:

Ինչ վերաբերում է ատենախոսի վկայած «Խոնարհաբար հեռուստ **երկրրպագեմ** քեզ, Եւ ըզդարձ քո խընդրեմ, քաղցրացի՛ր առ մեզ» նախադասությանը, ապա **քեզ**-անդամն այնտեղ միարժեքորեն ուղիղ խնդիր համարելը ճիշտ չէ այն պատճառով, որ ՄՀԲ-ն **երկրրպագել** բայը համարել է կրկնասեռ, սակայն տարօրինակ կերպով ասվածը հիմնավորել է ընդամենը մեկ օրինակով, որում այդ բայն արտահայտում է չեզոք սեռի քերականական իմաստ՝ *Սրտեղծողին տացուք զփառս և երկիրպագեմք խաչին նորա* (ՄՀԲ, էջ 192): Ատենախոսը **երկիրպագել/երկրպագել** բայով բերել է չորս օրինակ, որոնցում, մեր կարծիքով, բոլորն էլ չեզոք սեռի քերականական իմաստ են արտահայտում: Ահա այդ օրինակները՝ Ըստողծողին տացուք զփառս և **երկիրպագեմք** խաչին նորա (ՊՅԿ, 70): Ընդ աջմէ հոր նստան և **երկրպագեցին** նմա յորժամ բանն մարդ եղև (ԳՏՈ, 179): Ով որ **երկրպագեաց** գազանին և պատկերի նորա, արբցէ յանապակ բաժակէ բարկութեան (ԳՏՈ, 319): Խոնարհաբար հեռուստ **երկրրպագեմ** քեզ, Եւ ըզդարձ քո խընդրեմ, քաղցրացի՛ր առ մեզ (ՀԴՔ, Գր. Աղթ, 215), որոնցից վերջինում ևս **քեզ**-ը ոչ թե հայցականով ուղիղ խնդիր է, այլ տրականով հանգման անուղղակի խնդիր:

08.05.2025